



ԱՎԱՆԴԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ

Ֆիզիկական անձանց ավելացման իրավունքով ավանդի

թ. _____

"__" _____ 20 թ.

«Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը, այսուհետ՝ «Բանկ», ի դեմս _____

որը գործում է կանոնադրության /լիազորագրի/ հիման վրա, մի կողմից և _____

այսուհետ՝ «Ավանդատու», որը գործում է _____

մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՈՐԿԱՆ

1.1. Բանկը, ընդունելով Ավանդատուից ստացված կամ վերջինիս համար ստացված դրամական գումարը, այսուհետ՝ «Ավանդ», իրավունք վերապահելով Ավանդատուին ավելացնելու Ավանդի գումարը, պարտավորվում է Ավանդատուին վերադարձնել Ավանդի գումարը ավելացված Ավանդի գումարով, և սույն պայմանագրով սահմանված պայմաններով և կարգով տոկոսներ վճարել դրանցից:

1.2. Ավանդի գումարը՝ _____ (թվերով և տառերով)

1.3. Ավանդի տոկոսադրույքը՝ _____ տարեկան: (վճարվող տոկոսադրույքը թվերով և տառերով)

1.4. Ավանդի վերադարձման ժամկետը՝ "_____" _____ 20 թ.

1.5. Ավանդային գործառնությունների կատարման համար Բանկն Ավանդատուի համար բացում է թիվ _____ ավանդային հաշիվը: Այն դեպքում, երբ *Ավանդատուն* ժամկետի ավարտից հետո չի պահանջում վճարել ավանդի գումարը, ապա այդ գումարը և հաշվարկված տոկոսները փոխանցվում են ցպահանջ ավանդների հաշվին՝ առանց լրացուցիչ պայմանագրի կամ համաձայնագրի կնքման, և դրանց վրա հետագա տոկոսների հաշվեգրումը կատարվում է ցպահանջ ավանդների համար սահմանված դրույքաչափով, պայմաններով և կարգով:

1.6. Ավանդի տոկոսների վճարումը՝ ժամկետի վերջում

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1. *Բանկը*, նշված ժամկետը լրանալուց հետո, պարտավորվում է վերադարձնել *Ավանդատուին* ավանդը այն դրամական միավորով, որով ներգրավված է եղել: Հաշվարկված տոկոսները Ավանդատուին վճարվում են ՀՀ դրամով:

Եթե ավանդի վերադարձի օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա վերադարձը կատարվում է ոչ աշխատանքային օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ ոչ աշխատանքային օրերի համար վճարելով տոկոսներ:

2.2. Ավանդի գումարը կարող է լրացվել պայմանագրի գործողության ընթացքում: Այն դեպքում, երբ ավանդատուն լրացնում է ավանդի գումարը պայմանագրի գործողության ժամկետի վերջին ամսում, ապա լրացվող գումարի տոկոսների հաշվարկը կատարվում է՝ ելնելով մինչև մեկ ամիս տվյալ ավանդի համար սահմանված տոկոսադրույքից:

2.3. Պայմանագրի գործողության ընթացքում և հետագայում պահպանվում է Ավանդատուի և ավանդի գաղտնիությունը. տեղեկությունները տրվում են միայն օրենքով սահմանված կարգով:

2.4. Ավանդային հաշվի տնօրինման իրավունքն այլ անձին կարող է փոխանցվել սահմանված կարգով հաստատված լիազորագրով:

2.5. Ավանդի մուտքագրումը հավաստվում է բանկային փաստաթղթով (ստորագրված և կնքված դրամարկղի մուտքի անդորրագիր կամ դրոշմակնքված մեմորեալ օրդեր), առանց որի սույն պայմանագիրը առոչինչ է:

2.6. Ավանդն անկանխիկ ներդնելու/ավելացնելու դեպքում (չեկով, վճարման հանձնարարականով, այլ վճարային գործիքով), ավանդի մուտքագրումը հավաստվում է Բանկի կողմից տրամադրված քաղվածքով: Վերջինս տրամադրվում է ավանդատուին ոչ ուշ, քան ավանդի հաշվի վրա ավանդի գումարի մուտքագրմանը հաջորդող բանկային օրը: Բանկի և Հաճախորդի միջև ձեռք բերված համաձայնության հիման վրա քաղվածքը տրամադրվում է՝

- առձեռն
- փոստի միջոցով _____ /հասցե/
- էլեկտրոնային կապի միջոցով _____ /e-mail/

2.6.1. Ավանդային հաշվից անկանխիկ ելքագրումների իրականացման դեպքում հաճախորդին տրամադրվում է վերը նշված քաղվածքը 2.6 կետով սահմանված պայմաններով:

2.7. Բանկային ավանդի գումարի վրա տոկոսները հավելագրվում են Ավանդը բանկ մուտք լինելու հաջորդ օրվանից մինչև այն Ավանդատուին վերադարձնելու կամ Ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը:

2.8. Այն դեպքում, երբ ավանդը կամ դրա մի մասը Ավանդատուի պահանջով վերադարձվում է մինչև սահմանված ժամկետի ավարտը, ապա Բանկը տոկոսները հաշվարկում և Ավանդատուին վճարում է ցպահանջ ավանդների համար Բանկի կողմից սահմանված դրույքաչափով և կարգով՝ ելնելով ավանդի գումարի (ավելացված գումարի) փաստացի ներդրված օրերի քանակից:

2.9. Ավանդի դիմաց հաշվարկված տոկոսները, ինչպես նաև ավանդային հաշվին կանխիկ մուտքագրված միջոցները կանխիկ վճարելիս կոմիսիոն վճար չի գանձվում:

2.10. Պայմանագիրը կնքելիս Բանկն Ավանդատուին հանձնում է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով նախատեսված գրավոր ծանուցումը՝ ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին:

2.11. Բանկը, հանդիսանալով հարկային գործակալ, Ավանդատուին հասանելիք տոկոսագումարը վճարելիս, համաձայն «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի, պահում (գանձում) է եկամտահարկի գումարը և այն փոխանցում է պետական բյուջե:

2.12. ՀՀ օրենքներում և ենթօրենսդրական ակտերում կատարվող փոփոխությունները, որոնց գործողությունը տարածվում է սույն ավանդային պայմանագրի վրա, ենթակա են պարտադիր կատարման, և կողմերը պարտավորվում են ղեկավարվել կատարված փոփոխություններով:

2.13. Պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

2.14. Ավանդային պայմանագրի ժամկետը կարող է երկարաձգվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ այդ պահին բանկում գործող պայմաններով:

Գումարը (թվերով և տառերով)			
Երկարաձգման ամսաթիվը			
Մարման ամսաթիվը			
Ավելացվող ավանդ			
Ժամկետի վերջում վճարվող տոկոս			
Տոկոսադրույքը (թվերով և տառերով)			
Ստորագրություն	Ավանդատու		
	Բանկ Կ. Տ.		

* Երեք անգամից ավելի երկարաձգումները կկատարվեն պայմանագրի լրացման հիման վրա:

2.15. Ավանդատուն հավաստում է, որ մինչև Պայմանագրի ստորագրումը նախօրոք ծանոթացել է Բանկի կողմից ավանդների ընդունման կարգի դրույթներին և նրանում նշված բոլոր նմուշներին, որոնք փակցված են իրենց համար տեսանելի տեղերում, և լիովին ընդունում է Պայմանագրով անրագրված պայմանները:

ԲԱՆԿ
 Հասցե _____

 Գեռախոս _____

 /ստորագրություն/

ԱՎԱՆԴԱՏՈՒ
 Հասցե _____

 Անձնագրի տվյալները _____

 Գեռախոս _____

 /ստորագրություն/